ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հրապ. Կառավարական տուն 3
"15" հոկտեմբերի 2024թ. N 2448-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1587-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի 9-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 8-ին կայացած Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության մրցութային հանձնաժողովի գնահատման ամփոփ-թերթիկը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության 2024 թվականի հոկտեմբերի 8-ին կայացած մրցույթի արդյունքներն ըստ գնահատման ամփոփ-թերթիկի՝ համաձայն հավելվածի:

2. «Երևան-Կալուգա» միջպետական երթուղու սպասարկման համար 43,5 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել անհատ ձեռնարկատեր Սամվել Նազարյանին՝ «Մերսեդես Բենց» մակնիշի 80 VD 001, 80 TR 001, հաշվառման

համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 30000 դրամ փոխադրավարձով:

3. «Երևան-Թեհրան» միջպետական երթուղու սպասարկման համար 61,3 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Գոլդենթրի» ՍՊ ընկերությանը՝ «Հիգեր» մակնիշի 080 JJ 01 հաշվառման համարանիշի, «Մերսեդես-Բենց» մակնիշի 02 YT 001 հաշվառման համարանիշի և «Նեոպլան» 37 EC 025 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման չորս տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 17000 դրամ փոխադրավարձով:

4. «Երևան-Թեհրան» միջպետական երթուղու սպասարկման համար 58,5 ընդհանուր միավորով հաղթող չճանաչել «Երկու Ընկեր» ՍՊ ընկերությանը:

5. Ավտոմոբիլային տրանսպորտի՝ քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետին՝

1) ծանուցել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անհատ ձեռնարկատեր Սամվել Նազարյանին և «Գոլդենթրի» ՍՊ ընկերությանը՝ ծանուցվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրք վճարելու պարտավորության, ինչպես նաև չվճարելու դեպքում երթուղու սպասարկման իրավունքը տվյալ մրցույթում հաջորդ տեղն զբաղեցրած մասնակցին անցնելու մասին:

2) ապահովել անհատ ձեռնարկատեր Սամվել Նազարյանի և «Գոլդենթրի» ՍՊ ընկերության հետ պայմանագրի կնքումը՝ առնվազն նախատեսելով դրույթներ՝

ա) մրցույթի պայմանների խախտումների համար մասնակցի պատասխանատվության.

բ) ուղևորափոխադրումներն իրականացնելու իրավունքից զրկելու հիմքերի և կարգի վերաբերյալ:

6. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանին:

10/15/2024

X

ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: TERTERYAN VACHE 1201620635

/Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Երևան

Ձև № 7

Հավելված

ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարի

<< >> _____ 2024թ.

N _____ հրամանի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ-ԹԵՐԹԻԿ

08 հոկտեմբերի 2024թ

(մրցույթի անցկացման օրը)

Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	*Գումարային գնահատականը*			
	ներկայացված ավտոբուսների	վարորդների աշխատանքային փորձի	խախտումների առկայության	ընդամենը
«Սամվել Նազարյան» ԱՁ	*«Երևան-Կապուզա»*			
	33	2.5	8	43.5
«Երկու Ընկեր» ՍՊԸ	*«Երևան-Թեհրան»*			
	30	8.5	20	58.5
<<Գոլդենթրի>> ՍՊԸ	*«Երևան-Թեհրան»*			
	34.3	8	20	61.3

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

_____ (ստորագրությունը)

Խաչիկ Սողոմոնյան (անունը, ազգանունը)